



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության դերը, սկզբունքները և ուղղությունները երեխայի կրթության կազմակերպման գործընթացում>>:

Հետազոտող ուսուցիչ՝ Թ. Հարությունյան

Արմավիր մարզի <<Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան>> Նալբանդյանի միջնակարգ դպրոց:

Մենթոր ուսուցիչ՝ Ն. Վասիլյան



Արմավիր - 2022

Հետազոտություն

<<Ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության դերը, սկզբունքները և ուղղությունները երեխայի կրթության կազմակերպման գործընթացում>>:

Բովանդակություն

1. Նախաբան	էջ- 3
2. Գրականության ակնարկ	էջ -4
3. Գործնական համատեքստ	էջ -5
4. Եզրահանգումներ	էջ -18
5. Գրականության ցանկ	էջ -19



Նախաբան

Յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք, ինչն ամրագրված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը՝ ծնողների, աշակերտների և մասնագետների միջև համագործակցությունն է: Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունը աշխատում են համագործակցելով, երեխայի կարիքին համապատասխան միջավայրային հարմարեցումների ապահովումն առավել հեշտ է դառնում, ինչի արդյունքում շահում է հենց երեխան:

Այս նախադրյալներն են նպաստում որպեսզի դպրոցն ու ընտանիքն ունենան միանման սպասումներ ու օժանդակեն երեխայի ուսման գործընթացին: Հայտնի է, որ ընտանեկան միջավայրում տեղի է ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, դերային և վարքագծային կարծրատիպերի, արժեքային համակարգերի և աշխարհայացքի ձևավորումը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության և կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, ապահովում հոգեբանական հանգստություն ու հարմարավետություն: Մակայն երբ երեխան դառնում է դպրոցական, դաստիարակման և կրթման գործընթացը տեղափոխվում է կրթական հաստատություն:

Հատկանշական է, որ դպրոցական կյանքում ծագող խնդիրների նվազամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերված սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են դժվարությունների դրսևորմանը այդ իսկ պատճառով ընտանիքի դերը երեխայի



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

հոգեկան առողջության պահպանման գործում եղել և մնում է միշտ արդիական: Երբ երեխան սկսում է հաճախել դպրոց, ընտանիքի դերի կարևորությունը դրանով չի նվազում:

Գրականության ակնարկ՝

Մ. Երմոլովայի հետազոտությունները փաստում են, որ երբ ծնողներն ակտիվ մասնակցում են ուսուցման գործընթացին երեխան ցուցաբերում է ավելի բարձր առաջադիմություն, դրական վարք, հարգալից վերաբերմունք դասընկերների, դպրոցի և ուսուցիչների հանդեպ, ունենում է հավատ սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ, ինչն էլ խթանում է նրանց ակտիվությանն ու մասնակցությանը ուսուցման գործընթացում: Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և ուսուցիչների շփման և արդյունավետ համագործակցության արդյունքում նկատվում են սովորողի կայուն և շարունակական ձեռքբերումներ, նրանց մոտ ավելի արագ են ձևավորվում և զարգանում սոցիալական հմտությունները, վարքը դրականորեն է վերափոխվում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Ինչպես նշում է հայտնի մանկավարժ Ջ. Դիլոնը <<Երեխաները դպրոցը պետք է պատկերացնեն մի վայր, որտեղ նրանց ջանքերը հանգում են հաջողությունների և այդ հաջողությունները մեծանում են, երբ ծնողները և ուսուցիչները գտնվում են սերտ համագործակցության մեջ և պատրաստ են օգնել երեխային անհրաժեշտության դեպքում>>:

Խնդիրներ՝

1 . Երբ ծնողի ներգրավվածությունը երեխայի կրթության կազմակերպման գործընթացում հասնում է նվազագույն մակարդակի, ընտանիքը դուրս է մնում



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից և նրան, կարծես, տրվում է միայն մասնագիտական կարծիք լսողի դերը:

2 . Երբ ուսուցիչը, մանկավարժական աշխատողը, երեխայի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելիս օգտագործում են մասնագիտական բառապաշար, որը ոչ միշտ է հասկանալի ընտանիքի անդամներին և անուղղակի ուղերձ է առ այն, որ նրանք թիմի անդամ չեն:

Այս խնդիրների հաղթահարման միակ ճանապարհը ընտանիք-դպրոց կապի զարգացումն է: Երբ դպրոցի և ծնողների միջև հարաբերությունները հաստատվում են որոշ ժամանակ անց ընտանիքում ձևավորվում են մասնագետների հետ աշխատելու հմտություններ: Այսպիսով ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը պետք է հետաքրքրված լինի ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Գործնական համատեքստ՝

Համագործակցության սկզբունքները

Անժխտելի է, որ ընտանիք-դպրոց համագործակցությունը բարդ գործընթաց է, որն ունի բազմաթիվ մեխանիզմներ, սկզբունքներ, մոտեցումներ: Դպրոցի և ծնողների համագործակցային աշխատանքները կարող են իրականացվել ինչպես խմբային (ծնողական ակումբներ, խմբային խորհրդատվություններ, խնդիրների քննարկումներ, բաց դռների օր, ծնողական դասախոսություններ, ծնողական ժողովներ, փորձի փոխանակման ծրագրեր, հարց ու պատասխանի երեկոներ) այնպես էլ անհատական (անկետավորումներ, խորհրդատվություններ, տնայցեր, զրույց հիշեցման թերթիկներ, գործնական աշխատանքներ, հեռախոսազրույցներ) ձևերով: Դպրոցի և ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկ այլ ձև է ծնողների համար խորհրդատվությունների



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

կազմակերպումը:Այդ ընթացքում ընտանիքին տրամադրվում է ոչ միայն մանկավարժական տեղեկատվություն,այլև ցուցաբերվում է հուզական աջակցություն:

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին.

1. Վստահել:Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսվում է վստահությունից:Վստահության կարևոր պայման է ստացված ինֆորմացիայի գաղտնի պահելը:

2. Պահպանել երկկողմանի կապ:Արդյունավետ հաղորդակցում հաստատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները:Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ պետք է հարցեր տա ոչ միայն ուսումնական բնագավառներից այլև աշակերտների հետաքրքրություններից:

3. Համագործակցել:Համագործակցող կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնելու համար ընդհանուր նպատակներ սահմանելիս:Երբ առաջանում է որևէ խնդիր,դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: Ուսուցիչը պետք է միշտ հիշի,որ ընտանիքները տարբեր են,և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

4. Կրել ընդհանուր պատասխանատվություն: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը:

5. Լավատես լիել:Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա:Ծնողների հետ հաղորդակցությունը սկսելիս անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական,լավատեսական նոտայով:

6. Պահպանել ջերմ հարաբերություններ:Պիտի լինել ընդունող և աջակցող:



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

7. Խթանել և քաջալերել:Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր,պետք է լսել ծնողի առաջարկները,ուսուցումն արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները:

Համագործակցության ուղղությունները

Կրթական գործընթացին ծնողներին ներգրավվելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքները տարվում են 4 հիմնական ուղղություններով՝ ճանաչողական, տեղեկատվական-վերլուծական, ակնառու-տեղեկատվական և ժամանցային: Ճանաչողական ուղղության նպատակն է ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորել երեխաների դաստիարակման գործնական հմտություններ: Ծնողների մասնակցությամբ հանգստի, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, արշավների կազմակերպումը,ինչպես նաև բաց դասերը հնարավորություն են տալիս ծնողներին դիտարկել իրենց երեխաներին,այնպիսի իրավիճակներում,որոնք տարբերվում են ընտանեկան իրավիճակներից,համեմատել իրենց երեխաների վարքն ու հմտությունները մյուս երեխաների վարքի և հմտությունների հետ,ուսուցիչներից ընդօրինակել դաստիարակության և ուսուցման մեթոդներ և հնարներ,և ի վերջո ուսուցչի հետ համատեղ ստեղծել զարգացնող միջավայր երեխաների համար:

Տեղեկատվական-վերլուծական ուղղության նպատակն է բացահայտել ծնողների հետաքրքրություններն ու պահանջումները, ինչպես նաև նպաստել ուսուցիչների,ծնողների և աշակերտների միջև հուզական կոնտակտի հաստատմանը:

Ակտառու-տեղեկատվական ուղղության նպատակն է տեղեկատվություն հաղորդող նյութերը ձևակերպել և մատուցել այնպես,որ գրավի ծնողների ուշադրությունը,ներկայացնել գեղագիտորեն էսթետիկ ձևավորված,մշտապես



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

թարմացնել դրանց պարունակությունը, որպեսզի չկորի դրանց հանդեպ ծնողների հետաքրքրությունը:

Ժամանցային ուղղությունը միտված է ստեղծել ջերմ, վստահելի, հուզական հարաբերություններ ծնողների և ուսուցիչների, ծնողների և երեխաների, սովորողների և ուսուցիչների միջև: Աշխատանքների այս ուղղությունն ամենապահանջվածը, ամենացանկալին, ամենաօգտակարն է: Ժամանցները, տոները պետք է կազմակերպել ոչ թե ծնողների այլ ծնողների անմիջական մասնակցությամբ, որպեսզի նրանք պատկերացնեն թե որքան ուժ, եռանդ պետք է ներդնել ցանկացած նւթոցառում կազմակերպելու համար: Արդյունավետ է նաև այդ միջոցառումներին բոլոր ծնողների համագործակցությունը, շփումը միմյանց հետ:

Եվ ելնելով վերը նշված դրույթներից, ականավոր մանկավարժների հետազոտություններից, ցանկանում եմ նկարագրել իմ անձնական հետազոտությունը, որի արդյունքում բացահայտվեց իմ դասարանում սովորող աշակերտի մոտ շատ լուրջ խնդիր և ծնող-ուսուցիչ-մասնագետ համատեղ աշխատանքի արդյունքում ունեցանք մեծ ձեռքբերում: Նկատելով իմ աշակերտներից մեկի մոտ չափազանց ազդրեսիվ վարքագիծ, որը արտահայտվում էր հուզական անկայուն վիճակներով (լաց, ծիծաղ) սկսեցի կատարել դիտարկումներ, հավաքել երեխայի անամները, աշխատել ծնողի և մասնագետի հետ, ինչի արդյունքում պարզվեց, որ երեխան հաշվառված է մանկական հոգեբույժի մոտ վարքի և հուզական ոլորտի խանգարում ախտորոշմամբ: Մակայն միայն ախտորոշումը իմանալը բավարար չէր, հարկավոր էր ուսումնասիրել խնդիրը, դրա առանձնահատկությունները, տեղեկանալ դրանից բխող հնարավոր դժվարությունների մասին, քանի որ վարքային և հուզական խանգարումները անմիջականորեն ազդում էին երեխայի ուսումնական պրոցեսի վրա:

Դասերի ժամանակ երեխայի մոտ նկատվում էր, որ նա ունի ազդրեսիվ վարքագիծ դասընկերների նկատմամբ,



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- հաճախակի հրահրում է վեճեր,
- ցուցաբերում է կամակորություն,
- ցանկանում է տարիքից մեծ երևալ,
- հուզական արձագանքը չափազանց խառն է,
- ունենում է հաճախակի մղձավանջներ:

Այս հետազոտություններից հետո ծնողին հրավիրեցի դպրոց,զրուցեցինք,գտանք երեխայի հետ աշխատելու ուղիներ:

Կրթությունը առավել մատչելի դարձնելու համար մասնագետի հետ մշակեցինք ռազմավարություններ.

սովորողին տրամադրել լրացուցիչ ժամանակ ուսումնական նյութը յուրացնելիս,

- ակտիվացնող դասաժամերին հաջորդող առարկաների դասաժամերը պետք է սկսվեն ակտիվ բանավոր քննարկումներով,
- պիտի կիրառվեն պլանավորված գործողությունների կատարման արձանագրման անհատական օրագրեր,
- հնարավորություն տալ աշակերտին լինել որևէ գործողության պատասխանատու:


Ծնողի հետ խորհրդատվության ժամանակ որոշեցինք,որ ծնողը պիտի բացառի երեխայի.

- գերձանրաբեռնվածությունը,
- ձեռք բերի նրա վստահությունը:

Կատարված աշխատանքների և եռակողմ համատեղ աշխատանքի ընթացքում երեխայի մոտ նկատվեց դրական դինամիկա:



Աշխատանք երեխայի հետ՝



Ծնողի հետ ընտրեցինք գրույցի մեթոդը և վերհանեցինք երեխայի խնդիրները

1. Ե՞րբ է երեխայի մոտ նկատվել ագրեսիվ վարքագծային տարրեր:
2. Ինչպե՞ս է սնվում :
3. Ինչպե՞ս է գիշերը քնում:
4. Կողմնակի այլ վարքային դրսևորումներ նկատե՞լ եք:



5. Ընտանիքի անդամների հետ շփումը:

6. Վերջին անգամ ձեր երեխային ե՞րբ եք տարել հերթական հետազոտման:

7. Դուք համաձայն ե՞ք որ ձեր երեխայի հետ աշխատեն մասնագետները:

8. Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն

Երբ ծնողը ներգրավված է գավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները գավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել

- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.

Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.

- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր:

Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության

համար:



Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը.

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.

Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ
Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական որդուն.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի• սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.

Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.

- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Օգուտ ուսուցչին

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Օգուտ դպրոցին

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը շատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Եզրակացություն

Այսպիսով, ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության նպատակն է խրախուսել կայուն, շարունակական և արդյունավետ գործունեություն դպրոցական համայնքի բոլոր անդամների միջև՝ ուսուցիչ, մասնագետ, ծնող և սովորող: Մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Այսպիսով դպրոցը երեխային տալիս է ակադեմիական գիտելիքներ և ձևավորում գիտակցական վերաբերմունք իրականության նկատմամբ, իսկ ընտանիքն իր հերթին ապահովում է երեխայի գործնական փորձառությունը կյանքում: Երեխայի հետազոտման, նրա կարողությունների, հմտությունների և դժվարությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի համագործակցության միակ շարժառիթն այդ երկու կողմերի ընդհանուր հետաքրքրություններն ու շահերն են: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև գործընթաց է, որի միակ նպատակը երեխայի որակյալ կրթության ապահովումն է: Ծնողները և ուսուցիչները հանդիսանում են միևնույն երեխայի զարգացմանը նպաստող, նրա կրթությունը և դաստիարակությունը իրականացնող անձինք: Ուստի երեխայի դաստիարակությունը և ուսումնառությունը արդյունավետ կարող է լինել միայն նրանց ակտիվ համագործակցության պայմաններում: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է սահմանել դաստիարակության, ուսումնառության և զարգացման գործընթացի միասնական նպատակներ, ունենալ միասնական ակնկալիքներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակել ուսումնադաստիարակչական գործընթացում առաջացած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:



Գրականության ցանկ

1. Антонов А.И. Семья как социальный институт
2. Вячеславовна А. Ю. Диагностика и коррекция эмоционально-волевой сферы детей из неблагополучных семей.
3. Ինչպես խթանել ներառումը դասարանում /մեթոդական ուղեցույց ձեռնարկ/:

Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Երականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել

- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.

Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի• քննարկման նպատակով

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աճի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը.

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպեսին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական որդուն.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի• սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.

Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.

- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Օգուտ ուսուցչին

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Օգուտ դպրոցին

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.
- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը շատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի: